ԹԵՄԱ 3. ՎԵՐԱԿՈՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 19. ԻՏԱԼԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1

Իտալիայի ազգային հերոս Ջուզեպպե Գարիբալդին (1807–1882) Ռիսորջիմենտոյի ակտիվ ղեկավարներից էր: 10 տարի անցկացրել է Հարավային Ամերիկայում, մասնակցել այդ երկրների հակագաղութային ազատագրական պայքարին: Ակտիվ մասնակցել է 1848–49 թթ. հեղափոխությանը Իտալիայում: Կազմակերպել և ղեկավարել է 1849 թ. Հռոմի Հանրապետության պաշտպանությունը: Հեղափոխության պարտությունից հետո ստիպված էր կրկին վտարանդվել: Վերադարձել և ակտիվ մասնակցել է 1859–60 թթ. Իտալիայի միավորման համար պայքարին:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Գարիբալդու կոչը Սիցիլիայի բնակիչներին

Սիցիլիացիներ, ես ձեզ մոտ եմ բերել մի բոա խիզախների... մենք լսեցինք սիցիլիացիների հերոսական կանչը, և ահա մենք ձեզ հետ ենք: Մենք միայն մի բան ենք ցանկանում՝ հայրենիքի ազատագրումը: Լինենք միահամուռ, և գործը դժվար չի լինի: Ի զեն: Ով այն չի վերցնի՝ նա կամ վախկոտ է, կամ դավաճան: Ձենքի պակասը թող ոչ ոքի համար արդարացում չլինի: Քաջերի ձեռքում ամեն մի զենք էլ լավ է; Քաղաքային խորհուրդները հոգ կտանեն կանանց, երեխաներին և ծերունիներին: Եվ այսպես, ի զեն: Թող Սիցիլիան նորից աշխարհին ցույց տա, թե ինչպես է քաջարի ժողովուրդն ազատագրվում բռնապետներից:

օք. Գարիբալդի: Նամակներ և կոչերք Միլանէ 1954. կչ 30

2

Հետագայում՝ 1929 թ. Իտալիայի կառավարությունը Հռոմի Պապի հետ կնքված համաձայնագրով, Հռոմի մի փոքր շրջան՝ Վատիկանի և Լաթերանի պալատների տարածքը ճանաչեց Հռոմի Պապի իշխանության տակ: Այսօր այն 1000 մարդ բնակչությամբ և 0,44 կմ² տարածքով ինքնավար քաղաք-պետություն է: